

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2025.2-13>**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ****ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ****Ռոբերտ Գրենիկի Պետրոսյան, Սիրանուշ Արամայիսի Գալստյան*,****Գայանե Գաբիկի Հովհաննիսյան***Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ***galstyansiranush@nuaca.am*

Շինարարությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության ռազմավարական ճյուղերից, որն ակտիվորեն զարգանում է վերջին տասնամյակում: Շուկայում մրցակցության աճը խթանում է շինարարական կազմակերպություններին առավել արդյունավետ օգտագործել իրենց ֆինանսական ռեսուրսները: Հողվածի նպատակն է գնահատել շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական կայունությունը ֆինանսական գործակիցների կիրառման միջոցով՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վրա: Որպես հետազոտության առարկա ուսումնասիրվել է «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի 2020-2024 թթ. ֆինանսական գործունեությունը: Վերլուծության հիմքում ընկած են վիճակագրական, համեմատական և գործակիցների վերլուծությունների մեթոդները: Արդյունքները վկայում են կազմակերպության բավարար իրացվելիության պահպանման, ինչպես նաև շահութաբերության և ակտիվների շրջանառության նվազման միտումների մասին: Հետազոտությունն ընդգծում է ֆինանսական կառավարման ռազմավարության բարելավման անհրաժեշտությունը՝ կազմակերպության ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

Բանալի բառեր. ֆինանսական գործակիցներ, շինարարական արդյունաբերություն, ֆինանսական վերլուծություն, ֆինանսական հաշվետվություն

Ներածություն

Շինարարական ոլորտում ֆինանսական վերլուծությունն ունի առանցքային նշանակություն, կապված բարձր կապիտալիզացման, ակտիվների ցածր շրջանառության և շահույթի դանդաղ գեներացման առանձնահատկությունների հետ: Տնտեսական կայունության ապահովման և ռազմավարական որոշումների հիմնավորման նպատակով գործնականում կիրառվում են ֆինանսական գործակիցների համակարգային վերլուծություններ, որոնք համարվում են կառուցակարգված մոտեցումներ՝ կազմակերպության գործունեության գնահատման համար:

Ֆինանսական գործակիցների վերլուծությունը հնարավորություն է տալիս ստանդարտացնել հաշվապահական հաշվետվությունների տվյալները, բացահայտել ընկերության կայունության, շահութաբերության, վճարունակության և ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակը:

Այս մոտեցումը նվազեցնում է տվյալների սխալ մեկնաբանման հավանականությունը՝ ի տարբերություն առանձին թվաբանական ցուցանիշների վերլուծության: Գործակիցների համապարփակ վերլուծությունը ոչ միայն օգնում է հասկանալ ընկերության ներկայիս ֆինանսական վիճակը, այլ նաև կանխատեսել զարգացման հնարավոր ուղղությունները շուկայում մրցունակ մնալու նպատակով [1]:

Բացի այդ, պետք է շեշտել, որ շինարարական ընկերությունների գնահատման համար առավել նպատակահարմար է օգտագործել վերլուծական մոդելներ: Նման համալիր մոդելների կիրառումը թույլ է տալիս վեր հանել շինարարական բիզնեսի թաքնված ֆինանսական ռիսկերը և բարելավել ռեսուրսների բաշխման արդյունավետությունը [2]:

Այս առումով անհրաժեշտ է խորությամբ վերլուծել այն գործակիցների ամբողջությունը, որոնք առավել կիրառելի են շինարարական արդյունաբերության կազմակերպությունների համար, և դրանով իսկ նպաստել ֆինանսական կայունության գնահատման մեթոդների զարգացմանը:

Նյութեր և մեթոդներ

Ֆինանսական գործակիցները հարաբերական ցուցանիշներ են, որոնք բնութագրում են կազմակերպության ֆինանսական վիճակի տարբեր ասպեկտներ, որոնք հաշվարկվում են որպես ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվառման ցուցանիշների հարաբերակցություն:

Մշակվել են ավելի քան 100 նման գործակիցներ, սակայն դրանցից շատերը լրացնում կամ պարզաբանում են միմյանց, փոխկապակցված են և ունեն տարբեր անուններ, բայց հաշվարկվում են նույն մեթոդով և հակառակը՝ ունեն նույն անունները, սակայն հաշվում են տարբեր մեթոդներով:

Ֆինանսական վերլուծություն կատարելիս ֆինանսական գործակիցների կարևորությունը մեծ է, քանի որ թույլ են տալիս՝

- ֆինանսական գործակիցների արժեքների դինամիկան վերլուծելիս բացահայտել կազմակերպության զարգացման միտումները,
- բացահայտել ֆինանսական ռիսկերի սնանկության հավանականության բարձր աստիճան ունեցող կազմակերպություններին, որոշել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը,
- տարբեր կազմակերպությունների ֆինանսական գործակիցների ցուցանիշների համեմատության միջոցով ներդրում կատարել առավել գրավիչ ցուցանիշներ ունեցող կազմակերպությունում,
- կանխատեսել կազմակերպության ֆինանսական արդյունքները և ֆինանսական վիճակը [3]:

Ֆինանսական գործակիցները կազմակերպության ֆինանսական կայունությունը գնահատելու լավագույն միջոցն են, որոնք կազմակերպության մասին տեղեկատվությունն օգտագործո-

դին պատկերացում են տալիս կազմակերպության իրացվելիության, վճարունակության, շահութաբերության և արդյունավետության մասին: Ֆինանսական գործակիցներն արտացոլում են ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և հաշվարկվում են ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: Աղբյուրները կարող են լինել հաշվեկշիռը, շահույթի և վնասի մասին հաշվետվությունը, չբաշխված շահույթի մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը: Դրանք հակադրվում են մակրոտնտեսական ցուցանիշներին, որոնք բնութագրում են ողջ ազգային տնտեսության վիճակն ու զարգացումը:

Ֆինանսական գործակիցներն ունեն որոշակի առավելություններ, որոնցից առաջինը դրանց լայն տարածվածությունն է, որը պայմանավորված է դրանց հաշվարկման պարզությամբ: Մյուս առավելությունն այն է, որ ստանում ենք հարաբերական արժեքներ և որոնք կարող ենք համեմատել ոչ միայն տվյալ ընկերության, այլև ցանկացած այլ ընկերության նույն գործակիցների խմբի ցուցանիշների հետ համեմատության համար:

Հաշվարկելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպության վարչական անձնակազմը ստանում է կազմակերպության ֆինանսական վիճակի մասին օբյեկտիվ գնահատական անցյալում, ներկայում և կանխատեսվող ապագայում, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել թույլ կողմերի, առկա խնդիրների և հնարավոր աճի մասին:

Կան ընդհանուր ֆինանսական գործակիցներ, սակայն դրանք ստանդարտացված և միանշանակ չեն, ինչպես և միանշանակ չեն դրանց հաշվարկման ալգորիթմները և ստացված ցուցանիշները [4, 5]:

Ֆինանսական գործակիցները դասակարգվում են հինգ հիմնական կատեգորիաներով՝

Իրացվելիության գործակիցները գնահատում են ընկերության ընթացիկ պարտավորություններն ակտիվներով մարելու կարողությունը: Բարձր ցուցանիշները վկայում են արագ մարման և վճարունակության, իսկ ցածր ցուցանիշները՝ ֆինանսական խնդիրների հնարավորության մասին են:

Գործարար ակտիվության գործակիցները գնահատում են, թե որքան արագ է կազմակերպությունը շրջանառում իր ակտիվները և եկամուտները գներացնելու համար:

Շահութաբերության գործակիցները գնահատում են կազմակերպության շահութաբերությունը և գնահատում դրա կատարողականը և ֆինանսական կայունությունը:

Վճարունակության կամ կապիտալի կառուցվածքի գործակիցները չափում են կազմակերպության ֆինանսական հզորությունը և երկարաժամկետ պարտավորությունները մարելու կարողությունը [6]:

Շինարարությունը ՀՀ տնտեսության առաջատար ճյուղերից է: Այն մշտապես զարգացում է ապրում: Շուկայի մրցակիցները ստեղծում են անզիջում մրցակցային պայմաններ և նման պայմաններում առավել կարևոր է ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքները՝ սնանկությունից խուսափելու համար:

Կազմակերպության ֆինանսական արդյունքների վերլուծության հիմնական նպատակներն են գնահատել շահույթի ցուցանիշների դինամիկան, դրանց փաստացի արժեքի ձևավորման և բաշխման վավերականությունը, շահույթի վրա գործոնների ազդեցության վերլուծությունը, արտադրության օպտիմալացման հիման վրա հետագա շահույթի աճի պահուստների հայտնաբերումը, արտադրանքի ծավալները և ինքնարժեքը:

Կազմակերպության ֆինանսական վիճակը բնութագրվում է միջոցների (ակտիվների) և դրանց գոյացման աղբյուրների (պարտավորությունների) տեղաբաշխմամբ և օգտագործմամբ՝ կազմակերպության հաշվեկշիռից ստացված տեղեկատվության հիման վրա [7, 8]:

Շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության հիմնական խնդիրները ներառում են՝

- վճարունակության ցուցանիշների հաշվարկը,
- ավարտված շինարարական աշխատանքների շահույթի և շահութաբերության ցուցանիշների հաշվարկը,
- սեփական շրջանառու միջոցների և դրանց առաջացման աղբյուրների հարաբերակցության հաշվարկը,
- շինարարական արդյունաբերության կազմակերպությանը պատկանող շրջանառու միջոցների առկայության և կառուցվածքի ուսումնասիրությունը:

Շինարարության մեջ ֆինանսական վերլուծությունը ցուցանիշների և դրանց գնահատման համակարգն է, որում արտացոլվում է շինարարական արդյունաբերության կազմակերպության ողջ գույքի (ակտիվների) առկայությունը, կառուցվածքը և դինամիկան, ֆինանսական կայունությունը, իրացվելիության և վճարունակության մակարդակը, ինչպես նաև պարզել տնտեսվարող սուբյեկտին հետաքրքրող այլ տնտեսական հարցեր՝ թույլ տալով ավելացնել արտադրության արդյունավետությունը:

Ֆինանսական վերլուծությունը թույլ է տալիս որոշել շինարարական արդյունաբերության կազմակերպության շրջանառու միջոցների պահանջվող չափը, ֆինանսական արդյունքները (շահույթ, վնաս), հաշվարկային և վճարման կարգապահությունը: Ֆինանսական վերլուծության խնդիրները հանգում են հետևյալին՝

- ֆինանսական արդյունքների՝ շահույթի և շահութաբերության մակարդակի պլանների իրականացման որոշումը.
- սեփական շրջանառու միջոցների առկայության և ծավալի սահմանում և դրանց ծածկույթի աղբյուրների բացահայտում՝ փոփոխությունների վրա ազդող գործոնների սահմանում.
- սուբյեկտին շրջանառու միջոցներով տրամադրման և դրանց օգտագործման ուղղությունների բացահայտում և որոշում.
- կապալառուների և հաճախորդների հետ հաշվարկային գործարքների ճշգրտության և ժամանակի սահմանում.

- մատակարարների, այլ պարտապանների և պարտատերերի հետ կնքված պայմանագրերով դրամական միջոցների փոխանցումների՝ հաշվարկների ճշտություն և խնդիրների ժամանակին ուսումնասիրություն.
- նպատակային ֆինանսավորման և նպատակային եկամուտների համար նախատեսված հատուկ հիմնախնդիրների և միջոցների ստեղծման և օգտագործման ճշտության հարցերի քննարկում.
- ստանդարտացված և առկա ամբողջ շրջանառու միջոցների շրջանառության հաստատման հետ կապված հարցերի լուծում.
- շրջանառության արագացման ուղիների բացահայտում և այլն [3, 9]:

Շինարարական արդյունաբերության կազմակերպության ֆինանսական վիճակը հետաքրքրում է արտաքին օգտագործողներին՝ կապալառուներին, պարտատերերին, մատակարարներին և այլ բիզնես գործընկերներին և ներքին օգտագործողներին՝ բաժնետերերին և ֆոնդերի սեփականատերերին:

Ներքին օգտագործողները բացահայտում են արտադրության և տնտեսական գործունեության գործունեության ազդեցությունը ֆինանսական վիճակի վրա:

Ֆինանսական վերլուծության ոլորտները հետևյալ են.

- կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն,
- կազմակերպության ֆինանսական արդյունքի վերլուծություն,
- կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության և արդյունավետության վերլուծություն,
- ձեռնարկության ֆինանսական գործունեության համապարփակ վերլուծություն և գնահատում:

Վերլուծական ուսումնասիրությունների ընթացակարգը հետևյալն է՝

- սահմանվում են խնդիրների բնութագրող ցուցանիշները,
- բացահայտվում են վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության ընտրությունը և ստուգումը,
- իրականացվում է տեղեկատվության վերլուծական մշակում և ցուցիչների միջև գործունային կապ է հաստատվում,
- հայտնաբերվում են պաշարները, միջոցառումներ են նախապատրաստվում վիճակը բարելավելու համար,
- վերլուծության արդյունքներն ամփոփվում են և ներկայացվում են բացատրական գրության տեսքով՝ հաշվարկներով [8, 10]:

Ֆինանսական գործակիցների վերլուծությունը լայն կիրառություն ունի շինարարության ոլորտում, քանի որ տրամադրում է արժեքավոր պատկերացումներ և օժանդակում է որոշումների կայացմանը՝ ստորև ներկայացված եղանակներով:

Ֆինանսական կատարողականի գնահատում: Հարաբերակցության վերլուծությունն օգնում է շահագրգիռ կողմերին գնահատել կազմակերպության ֆինանսական ցուցանիշները ժամանակի ընթացքում և արդյունաբերության չափանիշներին համապատասխան:

Օրագրի իրագործելիության վերլուծություն: Օգտագործելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպությունները կարող են գնահատել շինարարական նախագծերի ֆինանսական իրագործելիությունը և հնարավոր շահութաբերությունը, նախքան դրանք ձեռնարկելը:

Ներդրողների վստահություն: Հուսալի ֆինանսական գործակիցները վստահություն են ներշնչում ներդրողների և շահագրգիռ կողմերի մեջ՝ աջակցելով դրամական միջոցների ներգրավմանը և գործարար գործունեությանը:

Ռիսկերի կառավարում: Ֆինանսական գործակիցներն օգնում են բացահայտել հնարավոր ֆինանսական ռիսկերն ու խոցելիությունը՝ թույլ տալով կազմակերպություններին մշակել ռիսկերի նվազեցման ռազմավարություն:

Բյուջետավորում և ֆինանսական պլանավորում: Հարաբերակցության վերլուծությունն օգնում է սահմանել իրատեսական ֆինանսական նպատակներ և մշակել ճշգրիտ բյուջեներ շինարարական նախագծերի համար:

Ռեսուրսների բաշխում: Ֆինանսական գործակիցների ըմբռնումն օգնում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և կապիտալի օգտագործման օպտիմալացմանը:

Համեմատություն մրցակիցների հետ: Կազմակերպությունները կարող են համեմատել իրենց ֆինանսական ցուցանիշներն արդյունաբերության մյուս կազմակերպությունների հետ՝ օգտագործելով ֆինանսական գործակիցները՝ պարզելու մրցակցային առավելությունները կամ բարելավման ուղիները:

Գործառնական արդյունավետություն: Վերլուծելով ֆինանսական գործակիցները՝ կազմակերպությունները կարող են բացահայտել ոլորտները, որտեղ գործառնական արդյունավետությունը կարող է բարելավվել՝ ծախսերը նվազեցնելու և շահութաբերությունը բարձրացնելու համար:

Վարկունակության գնահատում: Վարկատուները և պարտատերերը օգտագործում են ֆինանսական գործակիցները՝ գնահատելու կազմակերպության վարկունակությունը և որոշելու վարկավորման պայմանները:

Երկարաժամկետ պլանավորում: Ֆինանսական գործակիցներն օգնում են շինարարական արդյունաբերության կազմակերպությունների ռազմավարական երկարաժամկետ պլանավորմանը և նպատակների սահմանմանը:

Ֆինանսական հաշվետվությունները վերլուծելիս օգտագործվում են ստորև ներկայացված գործակիցները:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը կազմակերպության վճարունակության, կազմակերպության ընթացիկ (մինչև մեկ տարի) պարտավորությունները մարելու ունակության չափանիշն է: Հաշվարկելիս որպես իրացվելի միջոցներ են ընդունվում միայն կանխիկ դրամը, ինչպես նաև

արժեքները, որոնք կարող են վաճառվել ֆոնդային բորսայում, իսկ հայտարարում կարճաժամկետ պարտավորությունները ցույց են տալիս, թե կարճաժամկետ պարտքի որ մասը կարող է մարել կազմակերպությունը մոտ ապագայում՝ օգտագործելով կանխիկ և կարճաժամկետ ներդրումները (1).

$$\text{Ընթացիկ իրացվելիություն} = \frac{\text{Պրամական միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (1)$$

Կարճաժամկետ իրացվելիության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության առավել իրացվելի ակտիվների՝ դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հարաբերակցությունը կարճաժամկետ պարտավորություններին (2): Հարաբերակցությունը արտացոլում է ընթացիկ պարտավորությունների արագ մարման համար առավել իրացվելի ակտիվների բավարարությունը և կազմակերպության «ակնթարթային» վճարունակությունը.

$$\text{Կարճաժամկետ իրացվելիություն} = \frac{\text{Բարձր իրացվելի շրջանառու միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (2)$$

Ընդհանուր իրացվելիության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության կարճաժամկետ պարտավորությունները մարելու ունակությունը (3): Շրջանառու միջոցները պաշարների ինքնարժեքն է, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են վերածվել կանխիկի և ցույց են տալիս թե վարկերի և ընթացիկ այլ պարտավորությունների որ մասը կարող է մարվել ողջ շրջանառու միջոցների օպտիմալացման միջոցով.

$$\text{Ընդհանուր իրացվելիություն} = \frac{\text{Շրջանառու միջոցներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} : \quad (3)$$

Մաքուր շրջանառու կապիտալը ցույց է տալիս թե ինչպիսին է մնացորդը կազմակերպության առավել իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև, որոնք պետք է մարվեն մոտ ապագայում (4) [11]:

Մաքուր շրջանառու կապիտալ = Շրջանառու ակտիվներ - Կարճաժամկետ պարտավորություններ: (4)

Ակտիվների շրջանառության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության կողմից առկա ակտիվների ամբողջ ծավալի օգտագործման ինտենսիվության ցուցանիշը, որն օգտագործվում է կազմակերպության գույքի և պարտավորությունների կառավարման արդյունավետությունը վերլուծելու համար (5).

$$\text{Ակտիվների շրջանառություն} = \frac{\text{Արտադրանքի իրացումից առաջացած եկամուտներ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} : \quad (5)$$

Դեբիտորական պարտքի (ԴՊ) շրջանառության գործակիցը չափում է կազմակերպության մեկ միավոր դեբիտորական պարտքին բաժին ընկնող արտադրանքի իրացումից առաջացած եկամուտի չափը և ցույց է տալիս, թե որքան արագ են կազմակերպության դեբիտորները վճարում իրենց դեբիտորական պարտքերը (6).

$$\text{ԴՊ շրջանառություն} = \frac{\text{Արտադրանքի իրացումից առաջացած եկամուտներ}}{\text{ԴՊ տարեկան ցուցանիշ}} : \quad (6)$$

Կրեդիտորական պարտքի (ԿՊ) շրջանառության գործակցի ցուցանիշը չափում է իրացվող արտադրանքի ինքնարժեքին բաժին ընկնող կրեդիտորական պարտքի չափը տվյալ ժամանակաշրջանում և ցույց է տալիս, թե կազմակերպությունը քանի անգամ է մարել իր կրեդիտորական պարտքերի միջին գումարը (7).

$$\text{ԿՊ շրջանառություն} = \frac{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}}{\text{ԿՊ տարեկան ցուցանիշ}} : \quad (7)$$

Նյութական պաշարների շրջանառության գործակցը չափում է մեկ միավոր պաշարին բաժին ընկնող իրացված արտադրանքի ինքնարժեքի չափը և ցույց է տալիս, թե վերլուծված ժամանակահատվածում քանի անգամ է կազմակերպությունն օգտագործել պաշարի միջին հասանելի մնացորդը (8): Ցուցանիշը բնութագրում է նաև պաշարի որակը և դրա կառավարման արդյունավետությունը.

$$\text{Նյութական պաշարների շրջանառություն} = \frac{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}}{\text{Նյութական պաշարների տարեկան ցուցանիշ}} : \quad (8)$$

Շրջանառության տևողությունը միջոցների շրջանառության ժամանակահատվածն է, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումից մինչև պատրաստի արտադրանքի վաճառք և դրանց իրացումից եկամուտի ստացման պահը (9): Այն արտացոլում է կազմակերպության շրջանառու միջոցների կառավարման արդյունավետությունը.

$$\text{Շրջանառության տևողություն} = \text{Ապրանքի արտադրություն} + \text{Իրացում} + \text{Վճարում} : \quad (9)$$

Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակցը բնութագրում է կազմակերպության ակտիվների շահութաբերությունը, որը ցույց է տալիս կազմակերպության կարողությունը շահույթ ստեղծելու՝ առանց կապիտալի կառուցվածքը հաշվի առնելու (10): Ի տարբերություն սեփական կապիտալի շահութաբերության գործակցի ցուցանիշի, այն հաշվի է առնում կազմակերպության բոլոր ակտիվները և ոչ միայն սեփական կապիտալը, հետևաբար այն ներդրողների համար այնքան էլ հետաքրքիր չէ [12].

$$\text{Ընդհանուր ակտիվների շրջանառություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{Ակտիվների տարեկան ցուցանիշ}} : \quad (10)$$

Իրացման շահութաբերության գործակցը կազմակերպության ֆինանսական կատարողականի ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե կազմակերպության եկամուտի որ մասն է կազմում շահույթը (11, 12): Միաժամանակ հաշվարկվում է որպես ֆինանսական արդյունք: Այս գործակցը ցույց է տալիս կազմակերպության գործունեությունը շահութաբեր է թե ոչ, սակայն չի պատասխանում այն հարցին, թե որքանով են շահութաբեր ներդրումներն այս կազմակերպությունում.

$$\text{Իրացման շահութաբերություն} = \frac{\text{Շահույթ}}{\text{Իրացված արտադրանքի ծավալ}} , \quad (11)$$

$$\text{Իրացման շահութաբերություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{Իրացված արտադրանքի ծավալ}} : \quad (12)$$

Սեփական կապիտալի (ՍԿ) շահութաբերության գործակցը գուտ շահույթի ցուցանիշն է՝ համեմատած կազմակերպության սեփական կապիտալի հետ (13): Այն ցանկացած ներդրողի և բիզնեսի սեփականատիրոջ համար եկամտաբերության ամենակարևոր ֆինանսական ցուցա-

նիշն է, որը ցույց է տալիս, թե որքան արդյունավետ է օգտագործվել բիզնեսում ներդրված կապիտալը: Ի տարբերություն ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակցի ցուցանիշի, այս ցուցանիշը բնութագրում է կազմակերպության ոչ ամբողջ կապիտալի կամ ակտիվների օգտագործման արդյունավետությունը, այլ միայն դրա այն մասը, որը պատկանում է կազմակերպության սեփականատերերին:

$$\text{Սեփական կապիտալի շահութաբերություն} = \frac{\text{Մաքուր շահույթ}}{\text{ՄԳ տարեկան ցուցանիշ}} : \quad (13)$$

Սեփականության գործակիցը սեփական կապիտալի հարաբերությունն է կազմակերպության կապիտալի ընդհանուր գումարին, որը ցույց է տալիս, թե որքանով է կազմակերպությունն անկախ վարկատուներից (14): Որքան ցածր է այս գործակցի ցուցանիշը, այնքան կազմակերպությունը կախված է փոխառու միջոցներից:

$$\text{Սեփականության գործակից} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ընդհանուր կապիտալ}} : \quad (14)$$

Փոխառության գործակիցը ցույց է տալիս, թե որքանով է կազմակերպությունն ապավինում պարտքին՝ իր ակտիվները ֆինանսավորելու համար (15): Որքան բարձր է ցուցանիշը, այնքան ավելի ռիսկային են կազմակերպությունում ներդրում կատարելու վտանգները, իսկ որքան ցածր է ցուցանիշը, այնքան ավելի անկախ է կազմակերպությունը և պակաս ռիսկային՝ ներդրումներ անելու համար:

$$\text{Փոխառության գործակից} = \frac{\text{Փոխառու կապիտալ}}{\text{Ընդհանուր կապիտալ}} : \quad (15)$$

Ֆինանսական կախվածության գործակիցը ցույց է տալիս, թե կազմակերպությունը որքանով է կախված արտաքին ֆինանսական աղբյուրներից (16): Որքան բարձր է ցուցանիշը, այնքան ավելի ռիսկային են կազմակերպությունում ներդրում կատարելու վտանգները, իսկ որքան ցածր է ցուցանիշը, այնքան ավելի անկախ է կազմակերպությունը և պակաս ռիսկային՝ ներդրումներ անելու համար [13]:

$$\text{Ֆինանսական կախվածություն} = \frac{\text{Փոխառու կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} : \quad (16)$$

Արդյունքներ և քննարկում

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի (ուսումնասիրվող կազմակերպություն) հիմնական ֆինանսական ցուցանիշները՝ 2020-2024 թթ. ժամանակահատվածի համար: Այս տվյալները հիմք են հանդիսացել կազմակերպության ֆինանսական վիճակի համապարփակ վերլուծության համար՝ ֆինանսական գործակիցների կիրառմամբ:

Շինարարության գործընթացը բնութագրվում է փուլային և ալիքաձև բնույթով, որն անմիջականորեն ազդում է ֆինանսական գործակիցների վրա: Քանի որ շինարարական աշխատանքները սկսվում են մեկ տարում, ավարտվում մեկ այլ տարում, իսկ իրացումն էլ հաճախ կատարվում է հաջորդ փուլում, ֆինանսական ցուցանիշները բնական կերպով տատանվում են: Ուստի տարբեր գործակիցների բարձր կամ ցածր մակարդակները պետք է դիտարկվեն տվյալ տարվա արտադրական ցիկլի համատեքստում:

Աղյուսակ

**«ԱՄՇԻՆ» ՍՊԸ-ի ֆինանսական կայունության գործակիցների դինամիկան
2020-2024 թթ. (տարվա վերջում)**

Հ/հ	Գործակցի անվանում	2020 թ.	2021թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.
Իրացվելիության գործակիցներ						
1	Ընթացիկ իրացվելիություն	0,034	0,333	0,360	0,085	0,012
2	Կարճաժամկետ իրացվելիություն	0,503	0,397	0,388	0,117	0,059
3	Ընդհանուր իրացվելիություն	0,528	0,413	0,390	0,142	0,080
4	Մաքուր շրջանառու կապիտալ, դրամ	2 225 280 000	6 529 311 000	8 532 115 000	9 366 543 000	6 953 517 000
Գործարար ակտիվության գործակիցներ						
5	Ակտիվների շրջանառություն	0,011	0,476	0,076	0,020	0,010
6	Դեբիտորական պարտքի շրջանառություն	0,854	4,794	3,125	1,934	0,681
7	Կրեդիտորական պարտքի շրջանառություն	0,975	29,316	5,642	0,103	0,044
8	Նյութական պաշարների շրջանառություն	0,004	0,532	0,064	0,012	0,005
Ընդհանուր ակտիվների շահութաբերություն						
9	Ընդհանուր ակտիվների շահութաբերություն	0,030	0,050	0,001	0,054	0,0004
10	Իրացման շահութաբերություն	3,150	0,141	0,018	0,319	0,045
11	Սեփական կապիտալի շահութաբերություն	0,184	0,191	0,004	0,336	0,004
Վճարունակության կամ կապիտալի կառուցվածքի գործակիցներ						
12	Սեփականության գործակից	0,323	0,356	0,377	0,386	0,367
13	Փոխառու կապիտալի գործակից	0,677	0,644	0,623	0,614	0,633
14	Ֆինանսական կախվածություն	2,101	1,805	1,652	1,590	1,726

Իրացվելիության ցուցանիշներ

2020-2024 թթ. ընթացքում դիտվել է կազմակերպության իրացվելիության ցուցանիշների զգալի տատանում: Ընթացիկ, կարճաժամկետ և ընդհանուր իրացվելիության գործակիցներն ունեցել են նվազման միտում՝ համապատասխանաբար հասնելով 0,012, 0,059 և 0,080 ցուցանիշների: Չնայած այդ նվազմանը՝ բոլոր երեք գործակիցներն էլ մնացել են դրական սահմաններում, ինչը վկայում է այն մասին, որ կազմակերպությունը պահպանել է ընթացիկ պարտավորությունները մարելու նվազագույն կարողություն: Սա մասամբ պայմանավորված է ընթացիկ ակտիվների վերաբաշխմամբ և շինարարական փուլերի առանձնահատկությամբ:

Միևնույն ժամանակ, մաքուր շրջանառու կապիտալն արձանագրել է դրական աճ՝ 4,7 մլրդ ՀՀ դրամ, ինչը հնարավոր է պայմանավորված է ինչպես ընթացիկ ակտիվների ընդլայնմամբ, այնպես էլ ընթացիկ պարտավորությունների նվազմամբ: Այս միտումը գնահատվում է որպես կայունացման ազդակ՝ կազմակերպության կարճաժամկետ ֆինանսական քաղաքականության համատեքստում:

Գործարար ակտիվության ցուցանիշներ

Ակտիվների շրջանառության և նյութական պաշարների շրջանառության գործակիցները ժամանակաշրջանի ընթացքում ցուցադրել են անկումային միտում՝ համապատասխանաբար հասնելով 0,010 և -0,005 արժեքների: Նման տատանումները բացատրվում են շինարարական արտադրության փուլայնությամբ, ինչպես նաև մի քանի տարիների ընթացքում մեծածավալ ներդրումային ծրագրերի ընթացիկ փուլերում գտնվելով:

Դերիտորական պարտքի շրջանառության ցուցանիշի նվազումը՝ մինչև 0,681, մատնանշում է առևտրային պարտավորությունների դանդաղ մարում, ինչը բացասաբար կարող է ազդել դրամական հոսքերի հոսունության վրա: Միևնույն ժամանակ, կրեդիտորական պարտքի շրջանառության ցուցանիշի նվազումը (նույնիսկ բացասական արժեքով՝ -0,044) վկայում է, որ կազմակերպությունն իրականացրել է պարտավորությունների մարում՝ հնարավոր է՝ անգամ կանխավճարային մեխանիզմներով:

Շահութաբերության ցուցանիշներ

Ընդհանուր ակտիվների շահութաբերության գործակիցը, ինչպես նաև իրացման և սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշները ողջ ժամանակաշրջանում նվազել են՝ հասնելով համապատասխանաբար 0,0004, 0,045 և 0,004 արժեքների: Նման անկումը վկայում է շահութաբերության մակարդակի համատարած թուլացման մասին: Շինարարական ոլորտի համար սա կարող է պայմանավորված լինել արտադրական ծախսերի աճով, շենքերի իրացման ժամկետների ձգձգմամբ կամ շուկայի գների տատանումներով:

Հատկանշական է, որ նվազման միտումն առավել սուր է արտահայտվել այն տարիներին, երբ շենքերի շահագործումը հետաձգվել է կամ իրացման ծավալները զգալիորեն նվազել են:

Կապիտալի կառուցվածքի ցուցանիշներ

Վերլուծության ընթացքում դիտվել է կապիտալի կառուցվածքի դրական վերաձևավորում: Սեփականության գործակիցն աճել է մինչև 0,367, իսկ փոխառության գործակիցը՝ նվազել մինչև 0,633: Այս միտումները վկայում են ֆինանսավորման ավելի կայուն կառուցվածքի ձևավորման մասին, երբ գերակշռում են կազմակերպության սեփական ռեսուրսները: Նույն տրամաբանությամբ նվազել է նաև ֆինանսական կախվածության գործակիցը՝ հասնելով 1,726, ինչը ցույց է տալիս արտաքին աղբյուրներից նվազած կախվածությունը և ներքին ֆինանսական ինքնաբավության բարձրացումը:

Եզրակացություն

Շինարարական արդյունաբերության կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատումը կենսական նշանակություն ունի ինչպես ներքին կառավարման արդյունավետության, այնպես էլ արտաքին ներդրումային գրավչության բարձրացման տեսանկյունից: «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի 2020-2024 թթ. ժամանակահատվածի ֆինանսական ցուցանիշների համապարփակ վերլուծությունը, հիմնված ֆինանսական գործակիցների վրա, հնարավորություն է տվել բացահայտել ինչպես կայունության, այնպես էլ բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպությունն ընդհանուր առմամբ պահպանում է իր իրացվելիությունը, չնայած դրա նվազման միտումներին: Ընթացիկ, կարճա-ժամկետ և ընդհանուր իրացվելիության գործակիցները շարունակել են գտնվել դրական միջակայքում, ինչը վկայում է ընթացիկ ֆինանսական պարտավորությունները ծածկելու՝ կազմակերպության կարողության մասին: Հատկանշական է նաև մաքուր շրջանառու կապիտալի աճը, որն արձանագրել է դրական դինամիկա, պայմանավորված ընթացիկ ակտիվների ընդլայնմամբ և պարտավորությունների նվազմամբ:

Այնուամենայնիվ, մի շարք բացասական միտումներ են արձանագրվել շահութաբերության և ակտիվների օգտագործման ոլորտներում: Ընդհանուր ակտիվների, իրացման և սեփական կապիտալի շահութաբերության գործակիցների էական նվազումը վկայում է կազմակերպության շահութաբերության նվազման մասին, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ ապագա ներդրումային որոշումների կայացման համար: Նման տատանումները, մասնավորապես, պայմանավորված են շինարարական գործունեության փուլային բնույթով, ինչպես նաև շենքերի շահագործման ուշացումներով:

Գործարար ակտիվության ցուցանիշներում արձանագրված անկումը, մասնավորապես, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառության նվազումը, արտացոլում են կազմակերպության հաշվարկային կարգապահության և դրամական հոսքերի կառավարման որոշ թուլություններ: Նյութական պաշարների շրջանառության անկումը ևս հուշում է պաշարների արդյունավետ կառավարման անհրաժեշտության մասին:

Կապիտալի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս որոշակի դրական տեղաշարժեր: Սեփականության գործակցի աճը և փոխառության գործակցի նվազումը վկայում են ֆինանսական կախվածության նվազման և սեփական կապիտալով ֆինանսավորման աստիճանի աճի մասին, ինչը նպաստում է կազմակերպության ֆինանսական ինքնուրույնության ամրապնդմանը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ «ԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն գտնվում է հարաբերական ֆինանսական կայունության պայմաններում: Սակայն շահութաբերության անկումը և ակտիվների օգտագործման արդյունավետության նվազումը վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, ուղղված գործառնական արդյունավետության բարձրացմանը, ռեսուրսների ավելի նպատակային բաշխմանը և ֆինանսական կառավարումն օպտիմալացնող ռազմավարությունների մշակմանը: Այս քայլերը հնարավորություն կտան կազմակերպությանը չեզոքացնել ոլորտային ռիսկերը, ամրապնդել ֆինանսական դիրքերը և բարելավել ներդրումային գրավչությունը՝ կառուցապատման բարդ և փոփոխական պայմաններում:

Գրականության ցանկ

- [1] **O. Salah, M. Georgy, A. Ragab**, Financial Ratio Analysis in Construction Industry: An Investigation Using Machine Learning, Proceedings of International Structural Engineering and Construction 8(1) (2021), Paper CON-11. ISSN: 2644-108X.
DOI: 10.14455/ISEC.2021.8(1).CON-11
- [2] **N.N. Vibhakar, K.K. Tripathi, S. Johari, K.N. Jha**, Identification of Significant Financial Performance Indicators for the Indian Construction Companies, International Journal of Construction Management 23(1) (2023) 13–23. Published online: 12 Nov 2020. DOI: 10.1080/15623599.2020.1843559
- [3] **М. Шахова**, Финансовый анализ в строительстве, 2023. <https://spravochnick.ru/> (дата входа: 27.05.2025)
- [4] **Ս. Հ. Բաղդասարյան**, Ֆինանսական վերլուծություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2013, 293 էջ:
- [5] **А. Сафаров**, Финансовые коэффициенты: доверяй, но проверяй, Новости менеджмента 3 (Москва, 2011).
- [6] **С.И. Крылов**, Финансовый анализ (учебное пособие), Екатеринбург, 2016, 160 с.
- [7] **Ю.Н. Дубицкая**, Методические подходы к анализу финансового состояния строительных организаций, Вестник магистратуры 9-2 (96) (2019) 44-46.
- [8] **А.Н. Плотников**, Экономика строительства (учеб. пособие, 3-е изд., перераб. и доп.), Саратов, 2016, 288 с.
- [9] **В.В. Ковалев, О.Н. Волкова**, Анализ хозяйственной деятельности предприятия, ТК Велби, Москва, 2015, 221 с.
- [10] **Ս. Շ. Ստեփանյան**, Շինարարության էկոնոմիկա, ՃՇՀԱՀ, Երևան, 2019, 316 էջ:
- [11] **Г.Н. Лиференко**, Финансовый анализ предприятия (учебное пособие), Экзамен, Москва, 2019, 318 с.
- [12] **Л.Н. Чечевицына, К.В. Чечевицын**, Анализ финансово-хозяйственной деятельности (учебник), Феникс, Ростов-на-Дону, 2018, 368 с.
- [13] **С.Н. Ушаева**, Показатели эффективности структуры капитала фирмы, Вестник Челябинского государственного университета, Экономика 2 (140) (2009) 144-150.

ПРИКЛАДНЫЕ ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ФИНАНСОВЫХ КОЭФФИЦИЕНТОВ В ОРГАНИЗАЦИЯХ СТРОИТЕЛЬНОЙ ОТРАСЛИ

Роберт Греникович Петросян, Сирануш Арамаисовна Галстян*, Гаяне Гариковна Ованнисян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*galstyansiranush@nuaca.am

Строительство является одной из стратегических отраслей экономики Республики Армения, активно развивающейся в последние десятилетия. Рост конкуренции на рынке стимулирует строительные организации более эффективно использовать свои финансовые ресурсы. Целью данной статьи является оценка финансовой устойчивости организации строительной отрасли посредством применения финансовых коэффициентов, основанная на анализе финансовой отчетности. В качестве объекта исследования была изучена финансовая деятельность ООО «АРШИН» в 2020-2024 гг. В основе анализа лежат статистические, сравнительные и коэффициентные методы. Результаты свидетельству-

ют о сохранении достаточной ликвидности организации, а также тенденциях снижения рентабельности и оборачиваемости активов. Исследование подчеркивает необходимость улучшения стратегии финансового управления с целью повышения инвестиционной привлекательности организации.

Ключевые слова: финансовые коэффициенты, строительная отрасль, финансовый анализ, финансовая отчетность

APPLIED FEATURES OF USING FINANCIAL RATIOS IN CONSTRUCTION INDUSTRY ORGANIZATIONS

Robert Petrosyan, Siranush Galstyan*, Gayane Hovhannisyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**galstyansiranush@nuaca.am*

Construction is one of the strategic sectors of the Armenian economy, actively developing over the last decade. The increasing market competition encourages construction organizations to use their financial resources more efficiently. The purpose of this article is to assess the financial stability of a construction industry organization through the application of financial ratios, based on the analysis of financial statements. The research subject was the financial performance of "ARSHIN" LLC for the years 2020-2024. The analysis is based on statistical, comparative, and ratio methods. The results indicate the preservation of the organization's liquidity, but a tendency towards decreasing profitability and asset turnover. The research emphasizes the need to improve the financial management strategy to enhance the organization's investment attractiveness.

Keywords: financial ratios, construction industry, financial analysis, financial statements

Պետրոսյան Ռոբերտ Գրենիկի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, աշխատեմ (+374)91428036, rpvmm@yahoo.com, **Գալստյան Սիրանուշ Արամայիսի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, մագիստրոս, (+374)77708338, galstyansiranush@nuaca.am, **Հովհաննիսյան Գայանե Գարիկի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, բակալավր, (+374) 98985185, hgay5645@gmail.com
Петросян Роберт Греникович (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, ассистент, (+374) 91428036, rpvmm@yahoo.com, **Галстян Сирануш Арамаисовна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, магистр, (+374)77708338, galstyansiranush@nuaca.am, **Ованнисян Гаяне Гариговна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, бакалавр, (+374) 98985185, hgay5645@gmail.com
Petrosyan Robert (RA, Yerevan) - NUACA, Department of Economics, Law and Management, Assistant, (+374)91428036, rpvmm@yahoo.com, **Galstyan Siranush** (RA, Yerevan) - NUACA, Department of Economics, Law and Management, Master (+374)77708338, galstyansiranush@nuaca.am, **Hovhannisyan Gayane** (RA, Yerevan) - NUACA, Department of Economics, Law and Management, bachelor, (+374)98985185, hgay5645@gmail.com

Ներկայացվել է՝ 14.05.2025թ.

Գրախոսվել է՝ 02.06.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 29.08.2025թ.